

Հարթաշեն

Վարչական պատասխանատու՝ Գալստյան Գրիշա

Հեռ 077-61-56-96

Մակերես՝ 15.6կմ²

Բնակչություն՝ 136

hartashen.shirak@mta.gov.am

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք գյուղից 5-6կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 34կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Դյուզխարա, Դուզքենդ, Դուզքենդ Ներքին, Խըշ-Խըշ, Ղայդուլի, Ղայդուլի Դուզքենդ անվանումները: Հարթաշեն է վերանվանվել 1946 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Գյուղը տեղադրված է փոքրիկ գետակի հովտում, հարթավայրում ՝ ծովի մակարդակից 2030մ բարձրության վրա: Կիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:

Գյուղն ունի կանգուն եկեղեցի:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի շրջաններից, Կարսի մարզից 19-րդ դարում: 1873 թ-ին գյուղն ունեցել է 328, 1897 թ-ին՝ 428, 1926 թ-ին՝ 442, 1939 թ-ին՝ 652, 1959 թ-ին՝ 241, 1970 թ-ին՝ 241, 1979 թ-ին՝ 219 հայ բնակիչ: Հնում այստեղ բնակվել են նաև հույներ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 136 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 41 տնտեսություն: Ունի տարրական դպրոց, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (302հա), խոտհարքերը (197հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 218 և 690 հեկտար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Հարթաշեն
Ինդեքս՝ 2808